

ԱՆԱՀԱՅՈՒՅԹ

ԵՊՀ ֆինանսահաշվային ամքիոնի հայցորդ

ՀԱՍՏԱԿԻԱՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՎՐԱ

Անշարժ գույքի շուկան ազգային շուկայական տնտեսության այնպիսի ոլորտ է, որը դրանում ներառված օրյեկտների, շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների, դրանց կողմից իրականացվող գործնթացների, այսինքն՝ արտադրության կազմակերպման, անշարժ գույքի օրյեկտների փոխանակության, շուկայի կառավարման գործնթացների և շուկայի գործունեությունն ապահովող մեխանիզմների (շուկայի ենթակառուցվածքներ) համախումբ է:

Համաշխարհային ճգնաժամը բացասական ազդեցություն է ունեցել ՀՀ-ում ոչ միայն շինարարության ճյուղի կողմից տրվող արդյունքի ծավալների, այլև անշարժ գույքի շուկայի վրա: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ անշարժ գույքի շուկայում իրավիճակը սկսեց վատրարանալ 2008թ. ամռան վերջից, այսինքն՝ գորեք այն ժամանակ, երբ ԱՄՆ-ում սկսվեց համաշխարհային ֆինանսական ճգնաժամը:


Ընդհանուր առմամբ, ՀՀ անշարժ գույքի շուկայում տեղի ունեցող զարգացումները պատճականորեն պայմանավորված են եղել երկրի տցիալ-տնտեսական իրավիճակով: Այսպես, երկրի տնտեսական աճը, մակրոտնտեսական կայունությունը, բնակչության եկամուտների աճը, քաղաքական իրավիճակի կայունացումը, իրականացվող քաղաքաշինական և ներդրումային ծրագրերը, գործարքների իրականացման ծառայությունների ժամկետների կրճատումը, գործավարության և գրանցման փաստաթղթերի պարզեցումը, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի որոշակի կարգավորումը և հիփորեֆային շուկայի զարգացումը հանգեցրին անշարժ գույքի շուկայի կտրուկ զարգացմանը սկսած 2000թ. վերջից, ինչն արտահայտվեց թե՝ անշարժ գույքի գների, թե՝ իրականացվող գործարքների քանակական աճով: Աճի միտումները շարունակվեցին մինչև 2008թ. վերջ, երբ համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը հասավ Հայաստան: Արդյունքում տնտեսությունում արձանագրվեց խորը անկում, և տնտեսության մնացած ճյուղերի հետ նվազեց նաև անշարժ գույքի շուկան:

Սկսած 2000թ. մինչև 2008թ., երբ անշարժ գույքի գները Հայաստանում հասեան իրենց գագարնակետին, տարեկան համեմատությամբ գրանցվում էր անշարժ գույքի գների, ինչպես նաև՝ անշարժ գույքի գործարքների քանակի պարբերական աճ: 2008թ. օգոստոս ամսին ՀՀ անշարժ գույքի շուկայում իրականացվել է թվով 13064 գործարք՝ 12.4%-ով քիչ, քան նույն տարվա հուլիս ամսին և 10.6%-ով քիչ՝ 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ¹: Հատկանշական է այն փաստը, որ գործարքների քանակը սկսել է նվազել անշարժ գույքի գների անկմանը գործադրությունը: Օրինակ, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տվյալների համաձայն, 2008թ. օգոստոսին անշարժ գույքի գները նույն տարվա նախորդ ամավա համեմատ նվազել են 1.8%-ով², շարունակելով նվազել, իսկ նոյեմբերի վերջին իրապարակված տվյալներով՝ շուկայական միջին գները հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ անկում են ապրել ևս 0.3%-ով:

Ստորև գծապատկերի տեսքով ներկայացնենք ՀՀ անշարժ գույքի շուկայում կատարված գործարքների քանակները 2000թ. մինչև 2013թ. առաջին ինն ամիսների կտրվածքով (տես գծապատկեր 1):

¹ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, «ՀՀ անշարժ գույքի շուկան 2008թ. օգոստոսին» (վերլուծություն), էջ 1:


² Նույն տեղում:

ՀՀ անշարժ գույքի գործարքների քանակական շարժմբացը 2000-2013/9-ում¹

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, ճգնաժամին նախորդող վերջին տարիների ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակներն աճել են՝ բացառությամբ 2009 թվականի, որը պայմանավորված է հանրապետության անշարժ գույքի շուկայի վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բողած բացասական հետևանքներով: 2009թ. անշարժ գույքի շուկայում իրականացված գործարքների քանակը նվազել է 3%-ով: Արդեն սկսած 2009թ. սեպտեմբերից ՀՀ անշարժ գույքի շուկան աստիճանաբար սկսել է վերականգնվել, և գործարքների քանակը յուրաքանչյուր ամիս նախորդ ամսվա համեմատ շարունակաբար աճել է², սակայն հաջորդ ամիսն սկսել է գրանցվել 2012թ.:

Անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքը, որ անշարժ գույքի շուկայում, բացի գործարքների քանակական շարժմբացից, իր ուրույն տեղն ունի դրա բաշխվածությունը (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2

**Անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների բաշխվածությունն ըստ տեսակների
(տվյալ ժամանակահատվածում իրականացված գործարքների քանակի նկատմամբ, %) 2008-2013/9³**

¹ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2012թ. տարեկան վերլուծություն», էջ 1, 2013թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի վերլուծություն», էջ 1:

² ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, 2007-2009թթ. տնտեսական վերլուծություններ:

³ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2008թ. տարեկան վերլուծություն», էջ 2,

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2009թ. տարեկան վերլուծություն», էջ 3,

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2010թ. տարեկան վերլուծություն», էջ 3,

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2011թ. տարեկան վերլուծություն», էջ 3,


ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2012թ. տարեկան վերլուծություն», էջ 3,

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2013թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի վերլուծություն», էջ 1:

Ակնհայտ է, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում ուսումնասիրվող յուրաքանչյուր ժամանակահատվածում մեծ տեսակարար կշիռ են ունեցել օտարման գործարքները (տես զծապատկեր 3):

Գծապատկեր 3

Անշարժ գույքի օտարման գործարքների թիվը 2008-2012թ.¹



Գծապատկեր 3-ից ակնհայտ է, որ անշարժ գույքի օտարման գործարքների թիվը կտրուկ նվազել է 2009թ., ինչը պայմանավորված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի՝ անշարժ գույքի շուկայի վրա բացասական ազդեցությամբ: Նշենք, որ 2013թ. առաջին իմն ամփաների ընթացքում կատարվել է անշարժ գույքի օտարման թվով 35187 գործարք, այսինքն՝ ավելի քիչ, քան մինչև ճգնաժամ՝ 2008թ. նույն ցուցանիշի մակարդակը, որը կազմել է 41388 գործարք²:

2008թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված՝ ՀՀ անշարժ գույքի շուկայի վրա բացասական ազդեցությունն են ունեցել նաև մասնավոր տրանսֆերտների նվազումը և հիփոթեքային վարկափորման ծավալների կտրուկ աճը:

Ճգնաժամն ազդել է ՀՀ անշարժ գույքի շուկայում տիրող իրավիճակի վրա, քանի որ Հայաստան մտնող ֆինանսական կապիտալը նվազել է, առաջնային բնակարանների հիմնական գնորդները կամ սփյուռքահայերն են, կամ արտերկրից փոխանցումներ ստացող բնակչները, այդ պատճառով էլ Ուսուաստանում և ԱՍԴ-ում տնտեսական իրավիճակի վատրապացմանը գուգմբաց նվազել է կանխիկ դրամի ներհոսքը մեր երկիր, ուստի իջել է մարդկանց գնողունակությունը: Բացի այդ՝ ֆինանսական միջոցները ունեցող մարդկի, ովքեր վերջին տարիներին նախընտրում են իրենց միջոցները ներդնել շինարարության մեջ, իրենց վիճոցները դրւություն ունեցին այդ ոլորտից:

Այսպիսով, ճգնաժամի ազդեցությամբ ՀՀ շինարարության ոլորտի անկումը պայմանավորված էր ինչպես ներքին համախառն պահանջարկի նվազմամբ, այնպես էլ արտերկրում բնակվող հայերի եկամուտների նվազմամբ, քանի որ ՀՀ-ում անշարժ գույքի նկատմամբ պահանջարկի զգայի մասը ձևավորվում էր հենց նրանց կողմից, ինչով էլ կարելի էր բացատրել վերջին տասը տարվա ընթացքում անշարժ գույքի գների մոտ տասնապատիկ աճը: Այդ պահանջարկի նվազման պատճառով 2009թ. ընթացքում ՀՀ անշարժ գույքի շուկայում արձանագրվել են անշարժ գույքի գների անկման միտումներ: Մասնավորապես, մայրաքաղաք Երևանում 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները, 1 քմ մակերեսի հաշվարկով, 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 10%-ով³: Սակայն, եթե հաշվի առնենք 2009թ. մարտի սկզբին ԱՍԴ դրամի նկատմամբ դրամի մոտ 20%-ով արժեզրկումը, և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա Երևան քաղաքում 2009թ. հունվար-

¹ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2008թ. տարեկան վերլուծություն», էջ 2,

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2009թ. տարեկան վերլուծություն», էջ 3,

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2010թ. տարեկան վերլուծություն», էջ 3,

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2011թ. տարեկան վերլուծություն», էջ 3,

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2012թ. տարեկան վերլուծություն», էջ 3:

² ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2013թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի վերլուծություն», էջ 1, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2008թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի վերլուծություն», էջ 1:

³ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստորի պետական կոմիտե, «2009թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի վերլուծություն», էջ 2:

սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները, 1քմ մակերեսի հաշվարկով, 2008թ. նոյեմբերում մասմանակահատվածի համեմատ նվազել են շուրջ 22.8%-ով: 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևանում բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանի շուկայական միջին գինը, 1քմ մակերեսի հաշվարկով, կազմել է 270,800 ՀՀ դրամ¹, մինչդեռ 2008թ. նոյեմբերում մասմանակահատվածում այն կազմել է 296,000 ՀՀ դրամ²:

2008-2013թթ. ՀՀ անշարժ գույքի շուկայի ուսումնափրոբյունը ցույց է տալիս, որ Հայաստանում անշարժ գույքի շուկան ունեցել է հետևյալ առանձնահատկությունները՝

- անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում մեծ տեսակարար կշիռ են ունեցել օտարման գործարքները, որոնց թիվը կտրուկ նվազել է ճգնաժամի ազդեցությամբ և դեռ չի հասել նախաճգնաժամային մակարդակին,
- յուրաքանչյուր տարի Հայաստանում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ընդհանուր քանակի զգակի մասը կատարվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ,
- գործարքների ընդհանուր քանակի մեծ մասը գրանցվել է մայրաքաղաք Երևանում, ուստի ճգնաժամի ազդեցությամբ ավելի մեծ չափով գործարքների թիվը պակասել է հենց մայրաքաղաքում,
- ճգնաժամի ազդեցությամբ նվազել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները, և 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևանում բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանի շուկայական միջին գինը, 1 քմ մակերեսի հաշվարկով, կազմել է ավելի քիչ, քան 2008թ. նոյեմբերում մասմանակահատվածում,
- 2008թ. համաշխարհային ֆինանսատեսական ճգնաժամով պայմանավորված՝ ՀՀ անշարժ գույքի շուկայի վրա բացասական ազդեցություն են ունեցել նաև մասնավոր տրանսֆերտների նվազումը և հիփորեքային վարկավորման ծավալների կտրուկ աճը:

Ներկայում ՀՀ անշարժ գույքի շուկայում տիրող իրավիճակը կարելի է բնութագրել որպես ճգնաժամից հետո կայուն վերականգնվող, սակայն ՀՀ անշարժ գույքի շուկան, ընդհանուր առնամբ, դեռևս գտնվում է կայացման փուլում: Առկա են բազում գերակա խնդիրներ՝ կապված ինչպես բնագավառի օրենսդրության կարգավորման, այնպես էլ մասնագետների որակական հատկանիշների բարձրացման, համապատասխան կրթական ծրագրերի ներդրման, տեղեկատվության մատչելիության ապահովման, անշարժ գույքի շուկայի կայացման ու զարգացման, ինչպես նաև այլ հարցերի հետ:

Գտնում եմ, որ Հայաստանի անշարժ գույքի շուկայի հեռանկարային զարգացումն ապահովող կարևոր քայլերից են հանդիսանում՝

1. անշարժ գույքի շուկայում արժանահավատ տեղեկատվության ապահովումը (օրինակ՝ անշարժ գույքի ու անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումների իրականացում և արդյունքների հրապարակում ու իրագեկում ՁԼՄ-ների միջոցով);
2. անշարժ գույքի շուկայում վճարունակ պահանջարկի ավելացման նպատակով անշարժ գույքի հիփորեքային վարկավորման խթանիչ միջոցառումների իրականացումը, այդ թվում՝ անշարժ գույքի հիփորեքային վարկավորման համակարգի զարգացումը, զնային իրավիճակի շարունակական դիտարկումների իրականացումը և զնային ինդեքսների ձևավորումը, անշարժ գույքի շուկայական գնահատման համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին:

¹ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, «2013թ. հունվար-սեպտեմբեր Ժամանակահատվածի վերլուծություն», էջ 2:

² ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, «2008թ. հունվար-սեպտեմբեր Ժամանակահատվածի վերլուծություն», էջ 2:

ՀԱՍՏԵՎԱՐՀԱՅԻՆ ՔԻՆԱՄԱՏՏԵԽԱԿԱՆ ԹԳԱՄԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԾՈՒԿԱՅԻ ՎՐԱ

ԱՆԱՀԱՅԻԱՅՆ

ԵՊՀ ֆինանսահաշվային ամրիունի հայցորդ

Համառոտագիր

ՀՀ անշարժ գույքի շուկայում իրավիճակը սկսեց վատրաբանալ 2008թ. ամռան վերջից, այսինքն՝ գրեթե այն ժամանակ, երբ ԱՍԽ-ում սկսվեց հանձնախարհային ֆինանսական ճգնաժամը։ Ծգնաժամին նախորդը վերջին տարիների ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակներն աճել են՝ բացառությամբ 2009 թվականի, որը պայմանավորված էր հանրապետության անշարժ գույքի շուկայի վրա հանձնախարհային ֆինանսատեսական ճգնաժամի թողար բացասական հետևանքներով։ Ծգնաժամի արդյունքում ՀՀ անշարժ գույքի շուկայի վրա բացասական ազդեցություն են ունեցել նաև մասնավոր տրանսֆերների նվազումը և հիփորեքային վարկավորման ծավալների կտրուկ աճը։ Ներկայում ՀՀ անշարժ գույքի շուկայում տիրող իրավիճակը կարելի է բնութագրել որպես ճգնաժամից հետո կայուն վերականգնվող, որտեղ առկա են բազում գերակա խնդիրներ։

Բանակի բառեր. Ծգմաժամ, անշարժ գույք, շուկա, բնակարան, օտարման գործարք, շինարարության ոլորտ, մասնավոր տրանսֆեր և այլն:

ВЛИЯНИЕ МИРОВОГО ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКОГО КРИЗИСА НА РЫНОК НЕДВИЖИМОСТИ РА

АННА АНИСЯН

соискатель Финансово-расчетной кафедры ЕГУ

Аннотация

Ситуация на рынке недвижимости РА начала ухудшаться в конце лета 2008 года, то есть, почти в то время, когда в США разразился мировой финансовый кризис. За последние годы, предшествовавшие кризису, количество сделок с недвижимостью выросло, за исключением 2009 года, что было обусловлено негативными последствиями мирового финансово-экономического кризиса на рынке жилья. В связи с кризисом на рынок недвижимости РА негативно повлияли также падение частных трансфертов и резкое увеличение объемов ипотечного кредитования. Сложившуюся нынче ситуацию на рынке недвижимости РА можно охарактеризовать как устойчиво восстанавливающуюся после кризиса, где налицо множество первичных проблем.

Ключевые слова: кризис, недвижимость, рынок, квартира, сделка продажи, строительный сектор, частные трансферты, ипотечное кредитование.

THE IMPACT OF THE GLOBAL FINANCIAL CRISIS ON THE REAL ESTATE MARKET IN THE REPUBLIC OF ARMENIA

ANNA HANISYAN

*Ph.D. Student
Finances and Accounting Department
Yerevan State University*

Abstract

Since the end of summer 2008, the real estate market has started reporting poor performance; i.e. approximately the same period when the Global Financial Crisis emerged in the United States and went global. Prior to crisis, the number of real estate transactions had been growing for several years; in 2009, the market reported decline owing to the negative impact of the Global Financial Crisis on the real estate market of the Republic. Decline in remittances (current private transfers) from abroad caused by the Crisis and sharp increase in mortgage lending negatively affected the real estate market of the Republic of Armenia. Currently, the market is slowly recovering from the aftermath of the Crisis and could be described as a stable growth process; however the market still needs to address many primary issues.

Keywords: crisis, real estate, market, apartment, sales transaction, construction industry, private transfers, mortgage lending.